ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2013թ. հոկտեմբերի 30 N 108 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
<<ԱՊԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> , <<ԱՐՏԵՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>>,
<<ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ- ՆԵՐՈՒՄ ԵՎ << ԴԱՎԹԱՇԵՆԻ
Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ >>, << ԱԳԱՐԱԿԱՎԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>>
ՊՈԱԿ- ՆԵՐՈՒՄ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Ներքին աուդիտի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ– 728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 17-ի N 143-Ն հրամանի պահանջները

Կարգադրում եմ՝

1. 2013 թվականի ներքին աուդիտի բաժնի հաստատված ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի << Ապարանի բժշկական կենտրոն>>, <<Արտենի բժշկական կենտրոն>>, <<Ծաղկահովիտի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերություններում և <<Դավթաշենի Ա. Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց>>, <<Ագարակավանի միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպություններում անցկացնել 2010, 2011 և 2012 թվականների բյուջետային տարվա գործունեության աուդիտ, բաժնի գլխավոր մասնագետներ՝ խմբի ղեկավար Իշխան Բաղսեղյանի, Արիս Թովմասյանի, Սիրան Ասատրյանի և Կարեն Սուքիասյանի կողմից, աշխատանքներին մասնակից դարձնելով վերոհիշյալ ՓԲԸ-ների և ՊՈԱԿ-ների տնօրեններին և հաշվապահներին:

2. Աուդիտի անցկացման ժամկետ սահմանել 21 աշխատանքային օր՝ աշխատանքները սկսել 2013 թվականի նոյեմբերի 4-ից ավարտել 2013 թվականի դեկտեմբերի 2-ին:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ